

# ՍԱՂՄՈՍ 6

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Դժվար ժամանակներում աղոթք ողորմության <u>MT նախաբան</u> «Դավթի սաղմոսը. գլխավոր երաժշտին, լարային գործիքների վրա. ութ լարանի տավղի վրա»	Հավատքի աղոթք անհանգստության ժամանակ	Ծանր հիվանդությաննից բժշկության համար աղոթք	Դժվար ժամանակներում աղոթք	Աղերս փորձության ժամանակ
6:1-3	6:1-3	6:1-3	6:1-3	6:1-3
6:4-5	6:4-5	6:4-5	6:4-5	6:4-5
6:6-7	6:6-7	6:6-7	6:6-7	6:6-8ա
6:8-10	6:8-10	6:8-10	6:8-10	6:8բ-10

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

### ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p><b>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 6:1-3</b></p> <p><sup>1</sup>Ո՛վ ՏԵՐ, Քո բարկությամբ ինձ մի՛ հանդիմանիր Եվ Քո սաստիկ զայրույթով ինձ մի՛ խրատիր:</p> <p><sup>2</sup>Ողորմի՛ր ինձ, ՏԵՐ, քանի որ տկար եմ ես, Բժշկի՛ր ինձ, ո՛վ ՏԵՐ, քանի որ ոսկորներս անհանգիստ են:</p> <p><sup>3</sup>Իմ անձն էլ խիստ անհանգիստ է. Եվ Դու, ո՛վ ՏԵՐ, մինչև ե՛րբ . . .</p>
--

6:1 Այստեղ կան երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ, որոնք կիրառվել են որպես ՀԱՅՏԱԿԱՆ.

1. հանդիմանել – BDB 406, KB 410, *Hiphil* ժխտական, տես՝ Սաղմ. 38:1

2. խրատել – BDB 415, KB 418, *Piel* ժխտական

Սա գղջման սաղմոս է, ինչպես Սաղմոս 32, 38, 51, 102, 130 և 143-ը: Հրեական Աստվածաշնչյան Սերտոդրոյության գրքում (էջ՝ 1289) ասվում է, որ աղերսի այս Սաղմոսը դարձել է հրեա ժողովրդի շարաթվա օրերի առավոտյան աղոթքի ծիսական մի մասը:

❖ «**Քո բարկությանը . . . Քո զայրույթով**» Սաղմոսը չի ասում, թե ինչու է ՅԱՀՎԵՆ բարկացած (տես՝ Հատուկ Թեմա. Աստված նկարագրված որպես մարդ): Այն կարող է արտահայտել ՀԿ-յան մեկ պատճառականության աստվածաբանությունը: Սաղմոսերգուն թշնամիներ ուներ, ՅԱՀՎԵՆ էր թույլ տվել, ուղարկել նրանց (տես՝ Սաղմ. 6:3): Կյանքի իրավիճակներն այսպիսին են՝

1. մեղքի համար պատիժ (տես՝ Սաղմ. 41:4)

2. կյանքը մեղավոր՝ ընկած աշխարհում (տես՝ Սաղմ. 147:3)

3. հավատքը գորացնելու կերպեր (տես՝ 1 Կորնթ. 10:13, Եբր. 5:8)

Սակայն, ոչ ոք չգիտի, թե դրանցից որը կլինի, ուստի ապաշխարե՛ք և հավատք ունեցե՛ք:

**6:2-3** Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես է «անհանգիստ/զարհուրած» (BDB 96, KB 111, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) կապված այս երկուսի հետ՝

1. իմ ոսկորները (BDB 782), Սաղմ. 6:2

2. իմ անձը (բառացի՝ *nephesh*, BDB 659, տես՝ Սաղմ. 6:4), Սաղմ. 6:3 (տես՝ ամբողջական գրառումը Սաղմոս 3:2-ում և Ծննդ. 35:18-ում):

Այս երկուսն էլ անձի ներքին կյանքի և մտածողությանը վերաբերող կերպեր են: Այս հեղինակը մեծ անհանգստության մեջ է և չգիտի թե ինչու:

**6:2** Ինչպես Սաղմ. 6:1 խնդրում է ՅԱՀՎԵՆ՝ այն բանի համար, թե ինչ չանի, Սաղմ. 6:2-ը խնդրում է ՅԱՀՎԵՆ (նաև տես՝ Սաղմ. 6:4)՝

1. ողորմի՛ր ինձ – BDB 335, KB 334, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2. բժշկի՛ր ինձ – BDB 950, KB 1272, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

«Բժշկել» ԲԱՅԸ պարտադիր չէ, որ կապված լինի ֆիզիկական հիվանդության հետ (տես՝ NIDOTTE, հատոր 3, էջ՝ 1166, տես՝ Եսայի 1:5-6), այլ հակառակորդների հարձակմանը (տես՝ Սաղմ. 6:7բ, 10): Սակայն համար 2-ը մտածելու տեղիք է տալիս նաև հիվանդության հավանականության մասին: Եթե հիվանդություն է, ապա ինչո՞ւ են նշվում հակառակորդները: Ոմանք ասում են, որ թշնամիները ծաղրում էին սաղմոսերգուին (տես՝ Սաղմ. 102:8) իր հիվանդության մեջ: Հնագույն իսրայելացիները հավատում էին, որ մեղքը և հիվանդությունը կապ ունեն իրար հետ: տես՝ Հատուկ Թեմա. Բժշկություն:

**6:3** «**մինչև Ե՛րբ**» Սա Աստծո պատկերով ստեղծված մարդ էակի աղաղակ է, որը ընկած՝ մեղավոր մտքի, մարմնի և աշխարհի որոզայթով է բռնված (տես՝ Սաղմ. 13:1, 74:10, 90:13): Որպես հավատացյալներ մենք վստահում ենք Աստծուն, ոչ թե իրավիճակներին, սակայն այնուհանդերձ աղաղակում են՝ ինչո՞ւ: Ե՛րբ է այս ամենը վերջանալու:

**NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 6:4-5**

**<sup>4</sup>Վերադարձի՛ր, ո՛վ ՏԵՐ, ազատի՛ր իմ անձը,**

**Փրկի՛ր ինձ հանուն Քո ողորմությունների:**

**<sup>5</sup>Որովհետև մահվան մեջ Քեզ հիշել չկա .**

**Գերեզմանում ո՛վ գոհություն կհայտնի Քեզ:**

**6:4** Ինչպես որ Սաղմ. 6:2-ն է խնդրում ՅԱՀՎԵՆ գործել սաղմոսերգուի կողմից (այսինքն՝ «ողորմած լինել . . . բժշկել»), այնպես էլ Սաղմ. 6:4 –ն է.

1. վերադարձի՛ր – BDB 996, KB 1427, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2. ազատի՛ր – BDB 322, KB 321, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

3. փրկի՛ր – BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Ուշադրություն դարձրե՛ք, որ խնդրանքների համար տրված պատճառը սաղմոսերգուի արժանիքը կամ արժեքը չէ, այլ ուխտ կապող արարիչ՝ փրկիչ Աստծո անփոփոխ, ողորմած բնավորությունը:

Հնարավոր է զարմանաք, թե ինչ է նշանակում այս համատեքստում «վերադարձի՛ր» խոսքը: Արդյո՞ք սաղմոսերգուն կարծում է, որ ՅԱՀՎԵՆ հեռացել կամ ծածկվել էր իրենից:

❖ **«ողորմություններ»** Տես՝ Հատուկ Թեմա. Բարեգթություն:

**6:5** Սաղմոս 6:5 ներկայացնում է հանդերձյալ կյանքի վերաբերյալ ՀԿ-ի տեսակետը: *Sheol*-ը գիտակցական մի վայր է, սակայն առանց ուրախության և փառաբանության: Ֆիզիկական մահից այն կողմ գտնվող գիտակցական գոյության խնդիրը զարգանում է Սուրբ Գրքի ամբողջ բովանդակությամբ: ՀԿ-ում գոյություն ունեն միայն ակնարկներ (տես՝ Հոր 14:14-15, 19:25-27, Սաղմ. 16:10, 49:15, 86:13. Եսայի 25:8, 26:19, Եզեկ. 37:12-13, Դան. 12:1-2, Ովս. 13:14): Ամբողջ նշմարտությունը հայտնված է 1 Կորնթացիների 15-ում:

Եբրայերեն *Sheol* (BDB 982) բառը վերաբերում է մեռելների տիրակալությանը: Այն բնութագրվում է՝

1. որպես խավար, մռայլ վայր՝ Հոր 10:21-22, Սաղմ. 143:3
2. որպես մի վայր, որտեղից վերադարձ չկա՝ Հոր 10:21, 16:22
3. մի վայր, որտեղ չեն փառաբանում Աստծուն՝ Սաղմ. 6:5, 30:9, 8:10-12, 115:17 (լռություն՝ Սաղմ. 94:17)
4. Աստծուց զատված վայր՝ Սաղմ. 88:5, 39:13, չնայած Աստված այնտեղ էլ է՝ Սաղմ. 139:8, Առակ. 15:11

Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Որտե՞ղ են մեռելները:

Ուշադրություն դարձրե՛ք, որ հեղինակը հատուկ նշում է, որ *Sheol*- ի իր հասկացողությամբ այնտեղ չկա՝

1. հիշողություն՝ հիշել (BDB 271)
2. փառաբանություն (BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 30:9, 88:10-12, Եսայի 38:18)

*Թինդելի ՀԿ Մեկնության Շարքը* (հատոր 15, էջ՝ 78) թվարկում է *Շեոլի* համար ՀԿ-ում կիրառված պատկերները՝

1. հսկայական անդունդ՝ քարայր – Եզեկ. 32:18-32
2. մահվան դռներ – Սաղմ. 9:13, 107:18, Մատթ. 16:18
3. խավարի երկիր – Հոր 10:22
4. հսկա գազան՝ լայն երախով – Ես. 5:14, Հովնան 2:2, Ամբ. 2:5

Փա՛նք Աստծուն Նոր Կտակարանի համար:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 6:6-7**

<sup>6</sup>Հառաչելուց հոգնել եմ .

Ամեն գիշեր ողողում եմ անկողինս, արցունքներով թրջում եմ մահիճս:

<sup>7</sup>Իմ աչքը մաշվեց տրտմությունից,

Իմ բոլոր թշնամիների պատճառով խունացավ:

**6:6-7** Սաղմոսերգուն նկարագրում է իր «թշնամիների» պատճառով իրեն հասցված ֆիզիկական և էմոցիոնալ վնասները (BDB 865, KB 1058, *Qal* ԴԵՐԲԱՅ, «նրանք, ովքեր թշնամություն են ցուցաբերում»):

1. մաշվեց տրտմությունից (BDB 58)
2. արցունքներով ողողված անկողին (չափազանցություն):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 6:8-10**

**<sup>8</sup>Դո՛ւք՝ բոլոր անօրենություն գործողներդ, հեռացե՛ք ինձնից,**

**Որովհետև ՏԵՐԸ լսեց իմ լացի ձայնը:**

**<sup>9</sup>ՏԵՐԸ լսեց իմ խնդրանքը,**

**ՏԵՐՆ ընդունելու է իմ աղոթքը:**

**<sup>10</sup>Իմ բոլոր թշնամիները թող ամաչեն ու շատ զարհուրեն,**

**Թող հետ դառնան ու հանկարծակի ամաչեն:**

**6:8-10** Սաղմոսերգուն հասնում է մտավոր հանգստության մի կետի, երբ սկսում է վստահել ՅԱՀՎԵԻՆ, որը լսել է իր աղոթքը (տես՝ Սաղմ.28:6): Սա արտահայտվում է երեք զուգահեռ տողերում (այսինքն՝ Սաղմ. 6:8բ, 9ա, 9բ):

ՅԱՀՎԵԻ կողմից աղոթքը ընդունվելու շնորհիվ, «թշնամիները»՝

1. կհեռանան՝ Սաղմ. 6:8ա (տես՝ Սաղմ. 119:115, 139:19)
2. կամաչեն՝ Սաղմ. 6:10 (տես՝ Սաղմ. 71:13, 24)
3. շատ կզարհուրեն՝ Սաղմ. 6:10 (նույն ԲԱՅԸ կիրառվում է Սաղմ. 6:2բ և 3ա-ում)
4. ետ կդառնան՝ Սաղմ. 6:10 (միևնույն ԲԱՅԸ կիրառվում է ՅԱՀՎԵԻ համար Սաղմ. 6:4-ում, սակայն այստեղ հնարավոր է *Շեղ* գնալուն է վերաբերում. տես՝ Հոբ 34:15, Սաղմ. 9:18, Ժող. 3:20, 5:15, 12:7):
5. հանկարծակի կամաչեն (նույն ԲԱՅԸ Սաղմ. 6:10ա-ում, տես՝ Սաղմ. 73:19):

2-5 կետերը բոլորն էլ ԱՆԿԱՏԱՐ են՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով: Սաղմոսերգուն փնտրում է ՅԱՀՎԵԻ ներկայությունը, սակայն իր թշնամիների բացակայությունը: Այն ինչ նրանք փորձում էին իրեն անել, այժմ նրանց հետ է տեղի ունենում: Գրական նմանօրինակ կառուցվածքը (այսինքն՝ փոխադարձվող) բնորոշ է ՀԿ-ին: Այն ինչ մարդիկ ակնկալում են, հաճախ ՅԱՀՎԵԻ մատուցածի ճիշտ հակառակն է:

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Նկարագրեք *Շեղը* ըստ ՀԿ-յան տեսակետի:
2. Բացատրե՛ք, թե ինչ է նշանակում «ամաչել» խոսքը ՀԿ-յան համատեքստում:
3. Ինչպե՛ս է ՅԱՀՎԵԻ բարկությունը և զայրույթը կապված ամբարշտի և հավատարիմ հետևորդի հետ: